

Տարեցներն ուշադրության կենտրոնում են

01.10.2018

Տարեցների միջազգային օրվա կապակցությամբ այսօր Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանի կողմից լիազորված ներկայացուցիչ Պավել Ցուգունյանն այցելել է Աբովյանի «Նարեկ» ծերանոց, մասնակցել կազմակերպված տոնական միջոցառմանը և մարզպետի կողմից ծերանոցին է նվիրել սառնարան՝ որպես ուշադրության և երախտիքի կշան տարեցների և նրանց ինամքը 25 տարի իրականացնող այս կազմակերպության հանդեպ:

Աբովյանի «Նարեկ» ծերանոցը հիմնադրվել է 1999թ-ին՝ «Սաթենիկ» Բարեգործական-հասարակական կազմակերպության կողմից: Այսօր ծերանոցում բնակվում են 36 տարեցներ:

Ողջունելով և շնորհավորելով տարեցներին՝ Պավել Ցուգունյանը վերջիններիս մաղթել է առողջություն՝ վստահեցնելով, որ նոր իրողություններում նրանց հանդեպ հոգածությունն անպայման զգալի և տեսանելի է լինելու: Նա նաև շրջել է ծերանոցում, ծանոթացել պայմաններին, ինդիքներին. դրանց մի մասի լուծման ուղղությամբ կլինեն գործուն քայլեր:

Պավել Ցուգունյանը, փոխմարզպետեր Առնակ Ավետիսյանն ու Վասակ Վարդանյանն այցելել են նաև Կոտայքի մարզի 100-անց չորս տարեցներին՝ Աթենյա Յովհաննիսյանին, Մարիամ Բատոյանին, Ծաղիկ Ավետիսյանին և Արշալույս Յովհաննիսյանին և տոնի կապակցությամբ վերջիններիս փոխանցել նվերներ: